

**Նախագահ
Դալլին Հ. Օուքս**
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

# Սիրել մարդկանց, ինչպես Հիսուսն է մեզ սիրում



Հիսուսը կարևոր պատվիրան տվեց Իր աշակերտներին՝ «իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի» (Հովհաննես 15.12)։ Որպես Քրիստոսի հետևորդներ, մենք պետք է խաղաղ ապրենք մյուսների հետ։ Սա ներառում է մարդկանց, ովքեր նույն հավատալիքները չունեն, ինչ մենք։

Ահա մի քանի եղանակ, թե ինչպես կարող ենք սիրել մարդկանց, ինչպես Փրկիչն է սիրում մեզ.

- **Բարի եղեք այն մարդկանց հանդեպ, ովքեր տարբերվում են ձեզանից։**
- **Հարգանք ցուցաբերեք նրանց հավատքի հանդեպ։**
- **Երբեք մի բռնացեք կամ վիրավորեք որևէ մեկին։**
- **Եղեք լավ լսող։**
- **Եղեք քաղաքավարի։ Մի վիճեք, երբ զայրացած եք։**
- **Պաշտպանեք այն, ինչ ճշմարիտ է։**
- **Ավետարանի մասին մարդկանց պատմեք խոնարհ ձևով։ «[Խոսեք] ճշմարիտը լինելով սէրի մէջ» (Եփեսացիս 4.15)։**

Մեր Փրկիչի պատվիրանը՝ սիրել իրար, ինչպես որ Նա մեզ սիրեց, հավանաբար, մեր ամենադժվար մարտահրավերն է։ Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք սեր ցուցաբերել մեր բոլոր գործերում։ ●

*Հատված՝ «Սիրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ»,* Լիահոնա, *նոյեմբեր 2014, 25–28։*